ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության մարզերի վարչակազմերի և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչակազմերի (կառավարությունների) միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, այնուհետ՝ Կողմեր,

ելնելով իրավահավասար գործընկերության հարաբերությունների հետագա զարգացման անհրաժեշտությունից,

երկու պետությունների միջև գործող՝ տարբեր բնագավառներում համագործակցության զարգացմանը նպաստող միջազգային պայմանագրերին համապատասխան,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության մարզերի վարչակազմերի և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչակազմերի (կառավարությունների) միջև արդեն հաստատված բարեկամական հարաբերությունները,

նպատակ ունենալով ամրապնդել Հայաստանի Հանրապետության մարզերի վարչակազմերի և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչակազմերի (կառավարությունների) միջև փոխըմբռնումը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին

Հոդված 1

Սույն Համաձայնագրում օգտագործվող հասկացությունները նշանակում են հետևյալը՝

«Հայաստանի Հանրապետության մարզերի վարչակազմեր» - Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի վարչակազմեր,

«Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչակազմեր (կառավարություններ)» - Ռուսաստանի Դաշնության հանրապետությունների, երկրամասերի, մարզերի, դաշնային նշանակության քաղաքների, ինքնավար մարզերի, ինքնավար երկրամասերի պետական իշխանության բարձրագույն գործադիր մարմիններ,

«իրավասու մարմիններ» - հայկական Կողմի համար՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, ռուսական Կողմի համար՝ Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարություն:

Հոդված 2

Կողմերը կնպաստեն Հայաստանի Հանրապետության մարզերի վարչակազմերի և Ռուսաստան Դաշնության սուբյեկտների վարչակազմերի (կառավարությունների) միջև երկկողմ համագործակցության զարգացմանը:

Հոդված 3

1. Հայաստանի Հանրապետության մարզերի վարչակազմերը և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչակազմերը (կառավարությունները) իրենց իրավասության մեջ մտնող հարցերով կարող են կարող են համաձայնագրեր կնքել: Այդ համաձայնագրերը միջազգային պայմանգրեր չեն, դրանց կնքման կարգը ՝պետք է հակասի Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ազգային օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին:

2. Հայաստանի Հանրապետության մարզերի վարչակազմերը և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչակազմերը (կառավարությունները) կկատարեն իրենց միջև կնքված համաձայնագրերը՝ համաձայն իրենց պետությունների ազգային օրենսդրության:

Հոդված 4

Հայաստանի Հանրապետության մարզերի վարչակազմերի և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչակազմերի (կառավարությունների) միջև համաձայնագրերը կատարելիս ծագող

վեճերը կլուծվեն խորհրդակցությունների և բանակցությունների ճանապարհով, իսկ համաձայնության չհասնելու դեպքում՝ դատական կարգով՝ կնքված համաձայնագրերի դրույթներին համապատասխան:

Հոդված 5

1. Հայաստանի Հանրապետության մարզերի վարչակազմերի և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչակազմերի (կառավարությունների) միջև համաձայնագրերի առարկա չեն կարող լինել արտաքին քաղաքականության, պաշտպանության, օդային հաղորդակցության բնագավառներին վերաբերող հարցերը և այլ հարցեր, որոնք գտնվում են Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության տնօրինության ներքո և շոշափում են նրանց պետական ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը:

2. Հայաստանի Հանրապետության մարզերի վարչակազմերը և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչակազմերը (կառավարությունները) իրավունք չունեն կատարել փոփոխություններ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերում (միջպետական, միջկառավարական պայմանագրերում և միջգերատեսչական բնույթի պայմանագրերում) կամ արտահայտել դրանց վերաբերյալ հատուկ կարծիք:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո Կողմերի իրավասու մարմինները տեղեկացնում են միմյանց Հայաստանի Հանրապետության մարզերի վարչակազմերի և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչակազմերի (կառավարությունների) միջև կնքված համաձայնագրերի մասին:

Հոդված 7

Սույն Համաձայնագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով:

Հոդված 8

Սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը Կողմերի միջև կլուծվեն խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կատարելու մասին վերջին գրավոր ծանուցման օրվանից: Այն ուժի մեջ կմնա մինչև վեց ամիս լրանալը Կողմերից մեկի՝ Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մտադրության մասին մյուս Կողմին գրավոր ծանուցելու օրվանից:

Կատարված է Երևան քաղաքում 2001 թվականի սեպտեմբերի 15-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2002 թվականի հունվարի 9-ից: